

Խորհուրդ ման :

Տես մը մէջ կատու մը կար
Անանկ կատողած՝ անանկ չար ,
Որ խեղճ մըկանց անդադար
Անտանելի ջարդ կուտար .

Ծակէն ելլողը կատուին ճանկը կ'իյնար ,
Ծակէն չելէր՝ քաղցէն իր հոգին կ'եւար :
Տեսան մըկներն որ բաներնին խիստ գէշ է ,
Աս կատու չէ ըսին՝ մեզի պատիժ է .
Ասանկ չ'ըլլար , եկէք խորհուրդ մը ընենք ,
Ասոր մէկ ճարը տեսնենք .

Ժողովինը նայինք ուր պիտ' երթայ վերջերնիս ,
Ընեւելնիս մէկը խորհինք մէկերնիս :
Ասեն գրին , խորունկ ծակ մը ժողովեցան ,
Տրտուով տրտուով հոն խորհուրդի նշանեցան ,
Ասանկ ասանկ է բաներնիս բարեկամք ,
Դուք ինչ կ'ըսէք , ասոր ինչ ճար կը գտնաք :
Անգիւնէն ծեր խոհեմ մուկ մը ձայն հանեց ,
Ես կ'ըսեմ թէ ըսաւ , քիչ մը մտածեց ,
Ես կ'ըսեմ թէ աս բանիս մէկ ճար մը կայ .
Ան որ ընենք՝ ալ մեզ կատուէն վախ չըկայ .
Ճամ մը առաջ պէտք է որ մենք սիրտ ընենք ,
Անըզգամին վրէժն բոժոժ մը կ'ախենք .
Ան բոժոժին ձայնէն հարկաւ կ'իմանանք
Անոր գալն ու մէկէն ծակ մը կը մտնանք :
Բոլոր ժողովքն հաւնեցաւ աս խորհուրդին ,
Մեծ ու պղծտիկ արմընալով ծափ զարկին :
Մընաց որ մէկն երթայ բոժոժը կ'ախէ .
Ինչ գրծար բան . որ մուկն ասոր սիրտ ընէ :
Մէկն ըսաւ թէ ախարս որ ես հիւանդ եմ ,
Մէկալը թէ՛ ես ալ այնչափ ճարպիկ չեմ ,
Մէկը՝ ծեր եմ , մէկը՝ ես տղոց տէր եմ .
Մէկն ալ թէ ես սիրով ատ բանը կ'ընեմ ,
Թող մէկը բռնէ կատուն ,
Բոժոժը ես կը կ'ախեմ :
Մըկներն աս որ լռեցին ,
Լաւ մը վերան խնայեցին ,
Իրենք ալ խաղք խայտառակ
Փախան մտան ծակերնին :

Ասանկ ժողովքներ
Որչափ ես տեսեր ,
Որ մեծ խորհուրդներ
Պարապ են ելեր :
Ինչու ըսես նէ՝
Լաւ մտիկ ըրէ .
Նախ շատ արկարներ
Իրենց ուժէն վեր
Խորհուրդներ կ'ընեն .
Ինչպէս կատարեն :
Երկրորդ , շատ կայ
Որ խորհուրդ կուտայ ,
Գործեւոր որ գայ
Սուտ հիւանդ կ'ըլլայ .
Երրորդ , կան ոմանք
Որ ինչ աշխատանք
Դընես դիմացնին՝
Վառնեն վերանին .
Բայց արդեօք ինչպէս , —
Ետքի մըկան պէս :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ողեորութեան հրատարակչի Նախարարացի Եւ
լարա , Գրեալ Գրականութեամբ 'ի Յ . Յ .
ՊԱՐԹԵԼԸՄԵԱՅ , Եւ Լարգանեալ 'ի
Հ . Եւ ՈՒՍԱՐԴԱՅ Վ . ՀԻՐԻՄԻՉԵԱՆ
'ի Սիւնարեան Ուխտէն :

Պարթեւ կան որ Եւրոպայի մէջ ա-
մէն ուսումնական և ուսումնասէր
մարդկանց ծանօթ և յարգի և սիրե-
լի են . ուստի զարմանք չէ որ մեր ազ-
գակից եղբայրներէն ալ անոնք որ եւ-
րոպական ուսումնասիրութեան ճա-
շակը առեր են՝ ճանչնան , յարգեն ու
սիրեն նոյն գրքերը : Եւսպիսի գրքե-
րէն մէկն է նաև Պարթելըմի գաղ-
ղիացւոյն՝ Ողեորութեան հրատարակչի
Նախարարացի Եւլարա ըսուած գործքը ,
որուն հայերէն թարգմանութիւնը
վեց հատորի մէջ ամփոփուած 'ի լոյս
ընծայեցաւ :

Իրաւ , խիստ շատուր չեն դեռ մեր
ազգին մէջ աս գրքիս ալ յարգը ինչ-
պէս որ պէտք է ճանչցողները . բայց
այն սակաւութիւն ճանչցողներուն ալ
փափաքը մեծ էր որ տեսնեն մեր հի-
մակուան ազգային մատենագրութիւ-
նը այսպիսի գանձով մը հարըստա-
ցած . և ահա անոնց փափաքն ալ կա-
տարուեցաւ :

Եւ գրքիս հեղինակը իր ժամանա-
կակցացը մէջ ասով հուշակուեր է .
ան ատենի իմաստնոց կարգը աս գը-
րուածքովը անցեր է , և ինչուան աշ-
խարհիս վերջը իրեն անմահ յիշա-
տակ աս գործքը թողեր է : Թող ու-
րեմն մեր ժամանակակից եղբարքն
ալ սիրով ընդունին ասոր հայերէն
թարգմանութիւնը , և գիտնան որ
մեզմէ ետքը եկող մեր ազգակիցները
իրաւացի զարմացմամբ պիտի գովեն
մեր ժամանակի ուսումնասիրութիւ-
նը՝ որով այսպիսի գրքի մը հայերէն

Թարգմանութիւնն ու տպուելուն ինչ
և իցէ կերպով պատճառ և յորդորող-
ներ գտնուելու են :

Յունաց պատմութեանն ու մա-
տենագրութեանը հմտութիւն ունե-
ցողներէն ոմանք ըսած են թէ՝ « Մեծ
ազգ է Յունաց ազգը », աւելի ճիշդ
խօսելով՝ պէտք էր ըսէին թէ մեծա-
մեծ մարդիկ շատ ելած են Յունաց
ազգին մէջ . մենք ալ աւելցնենք՝
թէ ան մեծամեծ մարդիկն ալ մեծ
բաղդ ունեցեր են՝ որ եւրոպացի ի-
մաստնոց անխոնջ աշխատանքովը ի-
րենց պատմութիւնն ու գրականու-
թիւնը այնչափ պայծառացեր է : Ի՞նչ
հաւաստիկ իրենց աս բաղդաւորու-
թեանը մէկ ապացոյցն ալ, որ Պար-
թեւլմի գաղղիացին իր 79 տարուան
հնախոյզ և ուսումնասէր կենացը
գրեթէ կէսը, այսինքն երեսուն տա-
րին, անցուցեր է աս գիրքը շարա-
գրելու . և ասոր մէջ անբաւ հմտու-
թեամբ, զարմանալի ճարտարութեւ,
և գեղեցիկ ճարտասանութեամբ կը
ստորագրէ հին ատենի Յունաց ամե-
նէն աւելի փառաւոր սեպուած ժա-
մանակը, որ է Պերիկղեսի դարը . և
անանկ կը ձևացնէ որ իբր թէ նոյն
ատենները Մաքարսիս անունով ըս-
կիւթացի մը Յունաստան ճամբոր-
դութիւն ընելով՝ շարագրեր է իր տե-
սածներն ու ըսածները : Մեծ պատ-
կեր մըն է ասիկայ որ քաջ մատենա-
գիրը իր վարպետ վրձինովը կը նկարէ
աչքիդ առջև . և նիւթոց առատու-
թիւնը իր բեղնաւոր հանձարոյն օգ-
նական առնելով՝ նոյն պատկերին մէջ
կը հաւաքէ կը հիւսէ զարմանալի յար-
մարութեամբ նաև հին Յունաց այն
պարծանքները որ իրարմէ քիչ մը հե-
ռու կ'իյնան ժամանակաւ ըստ ճիշդ
պատմութեան :

Իսոնք լսելով՝ դիւրաւ կրնայ անց-
նիլ մեր ընթերցողաց մտքէն աս տա-
րակոյսը թէ արդեօք Պարթեւլմին
ալ ուրիշ շատ Եւրոպացւոց պէս չա-
փազանց յունասէրներէն մէկն է . ար-
դեօք ուրիշներուն պէս ինքն ալ Յու-

նաց պատմիչներուն յատուկ սեպուած
անապարծութենէն քիչ շատ խաբուեր
է . — մենք աս խնդրոյն պատասխանը
ուրիշ ատենի կը թողունք . բայց հոս
այսչափին վրայ կրնանք ապահովցը-
նել մեր ուսումնասէրները՝ թէ Պար-
թեւլմին բոլոր պատմածներուն հի-
մանցը ստոյգ ըլլալուն՝ այսինքն իր
քովէն հնարած չըլլալուն երաշխա-
ւոր են այն հին և նոր անթիւ հեղի-
նակները, որոնց անուններն ու գրքե-
րը ինքը ծանօթութեան մէջ հաւա-
տարմութեւ կը նշանէ, և մեր Թարգ-
մանութեան մէջն ալ նոյն խորհրդով
դրուեցան անոնք, թէպէտ և շատին
հայերէն Թարգմանութիւնը դեռ
չկայ, ու շատինն ալ և ոչ պիտի ըլլայ :
Միայն թէ ուրիշներուն պատմածնե-
րը ինքը գեղեցիկ կարգի մը մէջ կը
դնէ, ու ճարտասանական նկարագրու-
թեան մը զարդարուն ոճովը կարծես
թէ կարգացողին ձեռքէն կը բռնէ ու
Մաքարսիսին հետ զուարճալի ճա-
նապարհորդութիւն մը ընել կուտայ
հին Յունաստանի մէջ :

Իսկ մը խօսք ալ հարկ էր ըսել
հոս հայերէն Թարգմանութեան կա-
տարելութեանցը վրայ . բայց թէ որ
քաջ Թարգմանիչն անունը բաւական
չսեպուի աս Թարգմանութեան յար-
գը ճանչցնելու, մեր զգուշաւորու-
թիւնը (որով կը վախնանք անձնա-
գով երևնալու՝ երբոր մեր կրօնակից
եղբարց պատուական վաստակոցը վը-
րայ խօսինք) կը ստիպէ զմեզ որ աս
ընտրութիւնն ալ աւելի մեր ընթեր-
ցասիրաց կիրթ ախորժակին ու նաև
մեզմէ վերջը եկողներուն դատմանը
թողունք : Միայն թէ պատշաճ կը
համարինք հոս ալ մէկ ճաշակը տալ
աս գրքիս թէ բնագրին ոճոյն և թէ
Թարգմանութեանը . աս բանիս հա-
մար դնենք նախ Եպամինոնդ զօրա-
վարին մահը, և ետքը այն ճառը որ
Սոկրատայ բերանը կը դնէ հեղինա-
կը՝ իբր թէ իր դատաւորներուն առ-
ջև ինքզինքը արդարացնելու համար
խօսեր է :

Եւ ճակատեցան ընդ հուպ բանակքն երկոքեան առ միմեանս մերձ ի Մանտինէա քաղաք : Էին զօրք սպարտացւոց հանդերձ նիզակակցօքն , աւելի քան զերկուս բիւրս հետեակաց . և հեծեալք իբր երկու հազար : Իսկ թեքացւոցն երեք բիւրք հետեակաց , և հեծեալք իբր երեք հազար :

Պայծառագոյն քան ամենայն ուրեք անդանօր ցուցաւ հանձար Եպամինոնդայ . նովին կարգաւ ճակատու , որով ի Լեւկորա կանգնեաց զյաղթութիւն , ճակատեցոյց զգորսն : Մի ի թևոց նորս սինաձև յառաջ խաղացեալ՝ անկաւ ի վերայ սպարտական փաղանդին . զոր ոչ արդեօք կարէր նա բեկանել , եթէ ոչ Եպամինոնդ հասանէր նմա ի թիկունս , և օրինակաւն իւրով և ընտրելով գընդաւն զօրացուցանէր զնա : Յերեսաց նորա զարհուրեալ սասանեցան թշնամիք , և դարձան ի փախուստ : Զհետ եղև նոցա Եպամինոնդ , ոչ ևս կարացեալ ի չափու ունել զարիութիւն . և գունդ մի սպարտացւոց շուրջ պատեալ զնովաւ , տարափս նետից տեղային զնովաւ : Նա ընդ երկար պատըս պարեալ զանձն ի մահուանէ , և զամբոխ մարտկաց թաւալգլոր արկեալ ի փոշոյ , անկաւ ապա և ինքն տիգախոց , և եկաց երկաթն մսեալ ի կուրծս նորա ի վրին : Ոչ ինչ նուազ գործեցան զնովաւ նախճիրք . քանզի մարտակիցք նորա յաւելեալ ի ճիգն , և բուռն գիմամարտեալ առ ի թափել զնա ի ձեռաց թշնամեաց , ժառանգեցին զտիուր սփոփու մն ածելոյ զնա ի խորան իւր :

Հանգոյն իմն և ի միւսում թեի անդ յաղողու թիւնք խառն ընդ ձախողութիւնս գործեցան : Բայց խոհական կարգաւորութեամբքն Եպամինոնդայ ոչ կարացին աթենացիք հասանել յօգնութիւն սպարտացւոց . քանզի այրուձին նոցա յարձակեցաւ ի վերայ հեծեալադնին թեքացւոց . և հարուածեալ ի նմանէ , և յետս ընկրկեալ , կազմեցաւ անդրէն , և եհար զջուկատ մի թեքացւոց՝ որ ի մերձակայ բլուրս զկայ առեալ էր : Իսկ հետեակադուռնին նոցա գեռ ևս ի փախուստ դատնայր , եթէ ոչ եղէացիք հասանէին յօգնութիւն :

Խոցու մն Եպամինոնդայ արդէլ զկոտորածն , և զմոլեգնութիւն զօրականին կասեցոյց : Ճակատքն երկոքեան առ հասարակ պակուցեալք , կային ձեռնթափ . և փողք աստի և անտի հնչեցին զնահանջ , և նշան յաղթութեան ի տեղոյ ճակատուն կողմանքն երկաքանիւր կանգնեցին :

Բայց Եպամինոնդայ գեռ շունչն ի նմա կայր . բարեկամք նորա և սղայք շուրջ զմահձօքն կացեալ՝ հեղուին զարտօսր , և ընդ բանակն ամենայն լսելի լինէին հեծութիւնք ողբոց և յուսահատութեան : Վերաբոյժք և տուն զվճիւռ , զի ընդ կորզել զերկաթն ի վրայն՝ հարկ էր նմա մեռանել . այլ նա ընդ այն հոգայր , զի մի գուցէ ասպար իւր անկեալ իցէ ի ձեռս թշնամեաց . և իբրև ցուցին նմա զայն , առեալ յամբուրեաց զգործի փառացն իւրոց : Բայց տակաւին ի տաքնափ կայր զէլից մարտին . և իբրև զայն ևս գիտաց՝ եթէ յաղթեցին թեքացիք , ասէ . Վեցի շատ , և արգ գոհ եմ : Եւ ապա հրամայեաց կոչել առ ինքն զՏալիփանտ և զՅոդիդաս զերկոսին զօրագլուխս , զորս բաւական համարէր փոխանակ իւր . և իբրև գիտաց՝ զի անկեալ էին ի մարտին , ասէ . Ասացէք ապա ցթերացիս՝ խօսել ի խաղաղութիւն : Եւ պատուէր ետ իւրէլ զերկաթն ի վրայն . յայնժամ մի ի բարե-

կամաց նորա գոչեաց առ վշտին . Մեռանիս գեռ , Եպամինոնդ , այլ եթէ գէթ ոչ անորդի մեռանէիր : Եւ նա ասէ . Զյաղթութիւն Լեւկորայ և զՄանտինեայ թողում որդիս անմահս : Եւ զայս ասացեալ , եհան զոգի :

Բայց յառաջ քան զնա վախճանեցաւ Տիմաքեւնէս բարեկամն իմ սիրելի , այն որ ածն զիս յԵլլադա : Ութ աւուրք յառաջ քան զճակատամարտն ոչ ևս ուրեք երևէր նա ի միջի . և գտաւ առ դրստերքեռն իւրոյ գիր ի վերայ սեղանոյ , յորմէ գիտացաք՝ զի երթեալ էր գումարել ընդ Եպամինոնդայ , բան եղեալ ընդ նմա յառաջագոյն ի թեքէ . և խոստանայր ի գրին դառնալ անգրէն առ մեզ , և ոչ ևս մեկնել ի մէջ : Իսկ եթէ այլ ազգ հրամանք գիյն իցեն , ասէ , յուշ լիցին քեզ որ ինչ արարն ընդ իս Անաքարոսի , և որ ինչ խոստացար գեռ ինձ առնել ընդ նա :

Յրնթեռնուլն իմում զայն՝ սիրտն իմ ճմլեցաւ , և կամէի վաղ զհետ նորա ելանել . և իցիւ ելանէի : Այլ նորա յառաջագոյն պատրաստեալ էր խափան չուոյ իմոյ : Քանզի Ապողոդոր ըստ աղաչանաց նորա զաթենացւոյ կարգ և պատիւ ընկալեալ վասն իմ , ասէր ցիս . Ոչ ևս կարես զինուորել ընդդէմ նորոց հայրենեացդ , առանց մասն լինելոյ ինձ և իմում ազգատոհմս : Այս և եթ խափանեաց զիս . և ոչ ելի զհետ բարեկամին իմում , և ոչ տեսի զարութիւնս նորա , և չեղէ մահակից նմին :

Յանգիման աչաց իմոց է պատկեր նորա հանապաղ . ամբ երեսուն ի վերայ անցին , և թուի ինձ գեռ այն ինչ մեռեալ : Երկիցս բուռն հարի ի գրել զնմանէ ներքող , և արտասուք իմ ջնջեցին զգրեալքս . եթէ կարացեալ էր իմ կատարել զայն , կարէի արդեօք և լուել : Առաքինութիւնք առն սոսկականի բարեկամաց և եթ իւրոց զարմանալիք են , և սակաւք յայլոց ի նախանձ նմանութեան նոցա յորդորին : (Հատ . Բ , էջ 156) :

Ինչպէս պարզ ու որչափ վառվռուուն է աս Եպամինոնդայ մահուան ստորագրութիւնը , որ առանց չափազանցական ոճ մը բանեցընելու՝ կարգացողին միտքը կը յափշտակէ :

« Զեթանասնամենիւք անցեալ զայս առաջին նուագ յանդիման լինիմ ատենի : Աստանօր տարազ բանից և ձևք , ամենայն ինչ նոր է ինձ . և զի ի լեզու օտար հանդերձեալ եմ խօսել , այս մի ինչ խնդիր է ինձ ի ձենջ , միա զնել փաստից քան բառից . զի ձեզ պարտ է առնել զարգարութիւն , և ինձ խօսել զճմարտութիւն » :

Եւ յետ սրբելոյ յանձնէ զկեղտ ամպարշտութեան , անցանէ յերկրորդ գլուխ ամբաստանութեանն : « Զեղծուցիչ մանկուոյն աթենացւոց ամբաստանիմ . ցուցցեն զմի ոք յաշակերտաց իմոց , զոր ի յուրութիւն ձգեալ իցեմ : Զբազումս ի նոցանէ տեսանեմ յատենիս . յոան կացցեն , վկայեսցեն ընդդէմ զեղծուցողին իւրեանց : Եւ եթէ գոքա ակն ածեն յինէն , ընդէր հարք և եղբարք գոցա և ազգականք չկարգայցեն զխտութիւն օրինաց ի վրէժինգրութիւն , և ընդէր Մեքիտոս զվկայութիւն նոցա անտես առնիցէ . Զի նոքա ոչ

միայն շամբաստանեն զինէն, այլ և ի թիկունս ինձ հասեալ կան :

Ոչ զրպարտութիւնք Մեկտեայ և Նիհոտսի դատապարտեցեն զիս ի մահ, այլ ատելութիւն մնափառ և անիրաւ մարդկանն՝ զորոց նշաւակեցի զտգիտութիւն և զախտս . ատելութիւն որ զբազումս ի լաւաց կորոյս և կորուսցէ, զի չհամարիմ թէ մահուամբ իմով յագեցի :

Ջատելութիւնն զայն յանձն ձգեցի ցանկութեամբ խելամուտ լինելոյ զօրութեան հրամանին պատասխանելոյ դեղիական հարցիկին, որ վեհ քան զամենայն իմաստունս եցոյց զիս : Աստանօր ի բարկութիւն բրգեցան դատաւորք . բայց Սոկրատայ յառաջ ածեալ զբանսն, ասէ . « Ջարմացեալ ընդ պատգամն, հարցի զականաւորս յամենայն կարգէ քաղաքայնոց . և ամենայն ուրեք գտի յանդրգնութիւն և կեղծաւորութիւն : Ջանացայ երկմտեցուցանել զնոսա ընդ իւրաքանչիւր քաջութիւն, և արարի ինձ ոսոխս անհաշտելիս . և ի միտ առի՛ զի չեմ ոք իմաստուն, բայց միայն Աստուած . և զի պատգամախօսին այլասացութեան այս ելին ի մասոք, զի որ չհամարի զանձն իմաստուն՝ նա ի մաստնագոյն է ի մարդիկ :

Եթէ վասն անցուցանելոյ իմոյ զամս բազումս ի խնդիրս վտանգաւորս զիս ամբաստանիցեն, իմ պատասխանի այս է . Արհամարհելի են կեանք և մահ՝ առ ի լինել պիտանի մարդկան : Գիտացի՛ զի ի հրահանգել զնոսա սահմանեցին զիս երկինք . և որ զվտանգ մահու յանձն առեալ ոչ լքի զդաս իմ յոր կացուցին զիս զօրավարք Նմփիպօլիս, ի Պոգլիտէա և ի Գեղիոն, պարտ է ինձ արիադոյն ևս կալ ուր կացուցին զիս գիւղ ի միջի ձերում, և չկարեմ գասալիք լինել առանց ընդգէմ դառնալոյ հրամանաց նոցա, և զվատութիւն յանձն առնելոյ :

Եւ ոչ այսչափ միայն . այլ թէ և անպարտ կամեցիք արձակել զիս՝ զի մի ևս խօսիցիմ, ասացից ձեզ . Գատաւորք արգոյք, և սիրելիք ինձ, Աստուծոյ պարտիմ հնազանդել առաւել քան ձեզ . և մինչև իցէ յիս շունչ, ոչ գաղարեցայց որպէս մինչև ցայժմ յասելոյ համարձակաձայն ամենեցուն՝ որ ընդ առաջ լինին ինձ . Ո՛չ ամօթ համարիցիք հետամուտ լինել մեծութեանց և փառաց, և անփոյթ առնել զգանձս իմաստութեան և զձըմարտութեան՝ որ հոգւոյդ ձերում զարդ գործեն և կատարումն : Թախանձեցուցից զնոսա ժողովութեամբ և խնդրովք, և ամաչեցուցից ընդ կուրութիւն իւրեանց և ընդ սուտ առաքինութիւնս, և ցուցից զի նախամեծար առնեն քան զամենայն բարիս որ ինչ արհամարհանաց են արժանի :

Ջայտոսիկ հրաման է ինձ յԱստուծոյ քարոզել անլուելի մանկանց և ծերոց, քաղաքայնոց և օտարաց . և որով ի հնազանդելն իմում հրամանի նորա՝ պարգեք մեծագոյնք պարգևին ձեզ, նովին իսկ ի մասնելդ ձերում զիս ի մահ՝ մերժեսջիք զպարգևան Աստուծոյ, և ոչ ևս զոք գտանիցէք յայս նախանձ վառեալ : Ձեզ սլաշտպան կամ յատենիս մինչ թուիմ պաշտպանել անձին . զի թէպէտ և Անիտոս և Մեկտոս կարեն զրպարտել զիս և արտորել և բառնալ ի կենաց, այլ միտեւ ինձ ոչ կարեն . և աւաղելիք են քան զիս, զի են անիրաւք :

Առ ի խուսել ի հարուածոց նոցա, ոչ ըստ օրինակի այլոց ամբաստանելոց հնարս գաղտնածածուկ ի կիւր արկի կամ յայտնի աղերսանս : Առ

յոյժ մեծարանաց և ոչ գուծ հնարեցայ արկտնել ի ձեզ արտասուօք իմովք կամ որդւոց իմոց կամ բարեկամաց, շուրջ ածեալ զնոսա զինեւ . զի զգուծ ի տեսարանի արժան է յուզել ողորմելի տեսլեամբք . իսկ աստ ճշմարտութեան և եթ պարտ է լսելի առնել զձայն : Երգուեալ իսկ է ձեր յանդիման ամենեցուն՝ դատել ըստ օրինաց . արդ եթէ երգմնահարութեան հրապոյրս ի ներքս արկից՝ ամպարչտութեան գտայց մեղապարտ : Այլ ես խելամուտգոյն ևս եմ քան զհակառակորդս իմ՝ թէ է Աստուած, և անվեհեր յարգարութիւն նորա և ի ձերդ լինիմ ապաստան : (Հատ . Ե . էջ 160 :

Որչափ զարմանալի ճարտասանութեամբ նկարագրուած է Սոկրատայ իմաստներուն վսեմութիւնն ու իր անդրդուելի հաստատութիւնը աս ճառին մէջ : — Ի՞նչ երկու հատուածէս կրնայ իմացուիլ ընդհանրապէս Պարթելըմիին ոճը :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԵՐ

Չինաց կրօնքին վրայ :

Ի՞նչ մը կրօնքն ու արարողութիւնները իրեն բարուցը ճիշդ նկարագրելը կրնան սեպուիլ, և որչափ որ կարգէ դուրս ըլլան ան արարողութիւնները, այնչափ ալ զուարճալի կ'երևնան : Չինաց ազգը արդէն խիստ շատ սովորութիւններ ունի որ մեր երկիրներուն մէջ նոր ու զարմանալի կ'երևնան . բայց մենք հոս առ այժմ իրենց կրօնքին ու արարողութիւններուն վրայ միայն խօսինք կարճ կերպով :

Ինչհանրապէս Չինացիք իրեք կը րօնք ունին, մէկը Իսլամ կ'ըսուի, որ է Կոմիսիոնիսի վարդապետութիւնը . մէկալը Ֆոյ, որ Պուտտականութիւն ալ կ'ըսուի . երրորդը Թաօ, որ է փիլիսոփայից սղանդը . ասոնց մէջ առջինը բուն տէրութեան կրօնքն է, մէկալ երկուքը հասարակ ժողովրդեան :

Ինչգային կրօնքին քրմապետը թագաւորն է : Ի՞նչ կրօնին հետեւողները թէպէտ կը հաւատան թէ մէկ գերագոյն էակ մը կայ որ առաքինութիւնը